ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

2 դեկտեմբերի 2010 թվականի N 47

---

52. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՊԻՐՏԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1996թ. հունվարի 16-ի N ՆՀ-553 <<Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև Ազատ Առևտրի մասին>> համաձայնագիրը վավերացնելու մասին հրամանագիրը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը, հանձնարարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ 2011 թվականի հունվարի 1-ից սկսած Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ուկրաինական ծագման սպիրտային խմիչքների նկատմամբ կիրառել ներքին արտադրության սպիրտային խմիչքների համար սահման-ված ակցիզային հարկի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. դեկտեմբերի
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թ.
դեկտեմբերի 2-ի նիստի N 47
արձանագրային որոշման

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՊԻՐՏԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)
2203	գարեջուր	1 լիտրի համար	70
2206	Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	1 լիտրի համար	180
2207	Էթիլային սպիրտ	1 լիտրի համար	600
2208	Սպիրտային խմիչքներ, բացառությամբ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիների	բացթողման գնի (առանց ԱԱՀ և ակցիզային հարկի)	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 380 դրամ
	ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողման գնի (առանց ԱԱՀ և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամ